Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը ներգաղթյալների համար

Ինչպե՞ս է մարդահամարն ազդելու ընտանիքիս և իմ վրա:

Լոս Անջելես քաղաքում մոտ 1.5 միլիոն ներգաղթյալներ կան: Եթե ներգաղթյալները մարդահամար չանցնեն Լ.Ա.-ն կարող է կորցնել այն ճգնաժամային ծրագրերի, այդ թվում Head Start-ի, Երեխաների բժշկական ապահովագրության ծրագրի (CHIP), Լրացուցիչ սննդի աջակցության ծրագրի (SNAP, ուտելիքի կտրոններ) և Դպրոցի ճաշի ազգային ծրագրի ֆինանսավորումը, որոնց վրա իրենց հույսն են դնում ներգաղթյալ շատ ընտանիքներ:

Ձեր 2020թ. մարդահամարի տեղեկությունները պաշտպանված են:

2020թ. մարդահամարի համար U.S. Մարդահամարի բյուրոն առաջարկում է առցանց լրացնել հարցաշարը: Հոգ չէ, հարցաշարը լրացնում եք առցանց, թե թղթային դիմումի ձևով, ձեր անձնական տեղեկությունների պաշտպանությունը շատ կարևոր է: Օրենքով ձեր անձնական տեղեկությունները չեն կարող ձեր դեմ օգտագործվել և U.S. Մարդահամարի բյուրոն անվտանգության միջոցառումներ է ձեռնարկել՝ երաշխավորելու գործընթացի անվտանգությունը և ընթացքի ցանկացած քայլը:

Իմ տեղեկություններն անվտա՞նգ կլինեն: Դրանք կարո՞ղ են իմ կամ իմ ընտանիքի դեմ օգտագործվել:

Կիբերանվտանգության մակարդակի բարձրացման մասին 2015 թվականի դաշնային ակտը երաշխավորում է ձեր տվյալների պաշտպանությունը կիբերանվտանգության արտաքին վտանգներից: Ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը երբևէ չեն բացահայտվի կամ հրապարակվի: Ավելին, U.S. Մարդահամարի բյուրոյին չի թույլատրվում ձեր դեմ օգտագործել ձեր կողմից տրամադրված տեղեկությունները: U.S. օրենսգրքի 13-րդ հոդվածն արգելում է Մարդահամարի բյուրոյին տարածել ճանաչելի տեղեկություններ, որոնք դուք որևէ պատճառով հայտնել եք ցանկացած այլ կառավարական գործակալության կամ պաշտոնյայի (այդ թվում՝ ներգաղթի հարցերով զբաղվող պաշտոնյաների կամ որևէ իրավապահ գործակալության), արտաքին կազմակերպության կամ դատարանի:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census